Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2024 թվականի թիվ 01

«ԿԱՏԱ առևտրի տուն» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՀՄ-ԳՀԱՊՁԲ-24/01» ծածկագրով «Ալավերդի համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ձևով մեկ փուլով սննդամթերքի գնման ընթացակարգի մասնակից «ԿԱՏԱ առևտրի տուն» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում պայմանագիրը չի ստորագրել, չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դիմել ՀՀ Ֆինանսների նախարարությանը «ԿԱՏԱ առևտրի տուն» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար /ընկերության տվյալները, ինչպես նաև ընկերության ներկայացրած բացատրությունը կցվում է/:
2. Որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Տնօրեն _____ Մ. Աբգարյան

25 հունվարի 2024 թվական

ք. Ալավերդի